

ՀԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԵՐԸՆ ՀՆԱՏԻՊՆԵՐՈՒ ԹՈՒԱԿԱՆՆԵՐԸ

Պարզատումարի սկիզբը, թուղթ Ար,
դրուած է մինչ հարիւր, ու վաթուուն ու
մէկն թուականը, որ նկատուած է նաև
գրքին տպագրութեան տարին: Հայկական
այդ թուականին վրայ սովորաբար աւել-
ցուած է 551 և սատցուած քրիստոնէական
տարին՝ 1512:

Եթեալ գրքին վերջարեք, թուղթ Լդ,
«Եաղադու շարժմանց, որ է ցուցակ» իսո-
րագրու գրուած քին վերջառութեան կը
գտնուին հետեւել տողերը. «Եթէ կամի-
ցեն իմանալ զամո ի սկզբանէ արարածոց,
մինչ ուր ես, կալ թ և ԶՀԶ, և զիայ
թուական ի վերայ բեր և այն է: Եւ ի
Քրիստոսի ծննդենէն մինչեւ ի մեջ կալ
հինգ հարիւր և յիսուն երկու, և զիայ
թուական ի վերայ բեր և այն է:»

Արդ, վերոգրեալ տաւելաններուն հա-
մաձայն, գրքին տպագրութեան տարին
կը հաշուենք սապէս:

$$\begin{array}{r}
 \text{Ա.} - 1522 = 5976 \\
 + \text{հայ թուական} '961 \\
 \hline
 6937 \\
 - \text{Արարածոց թուական} 5424(*) \\
 \hline
 1513
 \end{array}$$

$$\begin{array}{r}
 \text{Բ.} - Քի. ծնունդէն մինչեւ մեր թուա- \\
 \text{կանը} 552 \\
 + \text{հայ թուական} '961 \\
 \hline
 1513
 \end{array}$$

ըստ այսմ Պարզատումարը տպուած է
1513 թուին:

Պարզատումարի վերոգրեալ տոմարա-
կան հաշիւններ նոյնութեամբ կը գտնուին
նաև Աղթարքի մէջ, թղ. ԺԶ. և. ԱՄՐՈՅՆ
կիւրդի Հայրապետին տատեալ է վասն
կաղանդաց, թէ զինչ լինիցի խորագրով

գրուած քին վերջառութեան, այսպէս.
«Եթէ կամիցես գիտել զամո ի սկզբանէ
արարածոց մինչեւ ուր ես, կալ ՌԶՀԶ, և
զիայ թուական ի վերայ բեր, և այն է:
Եւ ի Քի. ծննդենէն մինչեւ ի մեզ, կալ
ծնթ, և զիայ թուական ի վերայ բեր, և
այն է:»

Ուրեմն Աղթարքն ալ տպուած է նոյն
1513 թուականին, և հաւանաբար Պար-
զատումարին առաջ:

Այժմ պէտք է որ անդրադառնանք
Պատուագատատերի տպագրութեան թուա-
կանին: Այդ գրքի յիշատակարանին
սկիզբը կը կարդանք. «Գրեցաւ սր. տուա
ի ԶԿԲ ...»: Առյն 962 թուականին վրայ
հարկ է աւելցնի 552, հնաեւելով Պարզա-
տումարի և Աղթարքի տուեաններուն,
որով կ'ունենանք 1514 իրեւ թուական
Պատուագատատերի տպագրութեան:

Ամենիկելով մեր ըստները պիտի եղ-
րակացնենք թէ հայերէն հնուզոյն տպա-
գրութեամբ մեզի հասած հինգ գիրքերէն
երեքը յաջորդաբար հրատարակուած են
1513-1514 թուականներուն. այսպէս,

1513ին Աղթարք, և
Պարզատումար,
1514ին Պատուագատատեր:

Մնացեալ երկու գիրքերէն մին, Ուրբա-
թագիրքը, ասոնցմէ առաջ տպագրուած կը
համարուի, հիմունելով տպագրական զար-
գերու գործածութեան, և մաշուճաւ-
թեան տօտիմնին վրայ, իսկ Տաղարանը
ամենէն ետքը:

Ուրբաթագիրքը Աղթարքէն մօտաւո-
րապէս տարի մը առաջ տպագրուած հա-
մարելով՝ պահպանած կ'ըլլանք 1512 թու-
ականը իրեւ սկիզբ հայկական տպա-
գրութեան:

Գալով վասն ֆանի խորագրուած պրա-
կին, «ԳԳ պրակաթիւը կը կրէ, ըստ
երեսութին կը պատկանի Ուրբաթագրքին,
իրեւ յաւելուած, և զետեղելի է նոյն
գրքի Գ և Ֆ պրականներուն միջն, ինչպէս
ունի Ա. Յ. Զետագրատան մէջ պահուող
թիւ 3474 հատորը:»

Ն. ԱՐՔ. ՄԱՎԱԿԱՆ

(*) Բնագրին հետևողութեամբ հաշուելով,
6976 - 552 = 5424: